

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն
Երևանի պետական համալսարանի
Կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի
2026 թ. հունիսի 2-ին կայացած թիվ 13 նիստի

Կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի 2026 թ. հունիսի 2-ին կայացած թիվ 13 նիստը նախագահում էր ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի դեկան Կ.Գ.Դ., դոցենտ Կ.Ա. Ղազարյանը: Գիտական խորհրդի 32 անդամներից նիստին ներկա էին 24-ը:

Դեկան Կարեն Ղազարյանի կողմից ներկայացվեց նիստի օրակարգը, որը դրվեց քվեարկության և հաստատվեց միաձայն:

Օրակարգում՝

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կենսաբանության ֆակուլտետի «Կենսաբանություն» ԳՀ ինստիտուտի գիտական կազմի թափուր պաշտոնների համալրման մրցութային ընտրության հարցը:
 2. ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի առկա ուսուցմամբ ասպիրանտների տարեկան ատեստավորման հարցը:
 3. ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի «Մասնագիտական վերապատրաստում-2025» մրցույթի շրջանակում իրականացվող Սոնա Նիկոլյանի «Ախթալայի պոչամբար նմուշներից մեկուսացված, մետաղակայուն *Pseudomonas aeruginosa* A1W3 շտամի Zn և Cd մետաղների նկատմամբ կայունության մեխանիզմների գնահատումը մոլեկուլային կենսաբանության մեթոդների կիրառմամբ» 25PTS-1F028 ծածկագրով նախագծի հաշվետվության հարցը:
 4. ԵՊՀ Կենսաբանության ֆակուլտետի կենդանաբանության ամբիոնի նախկին ասպիրանտ Ռուզաննա Գևորգյանի և կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի առկա ասպիրանտ Սիլվարդ Թադևոսյանի ատենախոսության թեմաների վերաձևակերպման հարցը:
 5. ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի բակալավրիատի և մագիստրոսական կրթական ծրագրերի ղեկավարների հաշվետվության հարցը:
 6. Ընթացիկ հարցեր:
-
1. ԼՍԵՑԻՆ՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կենսաբանության ֆակուլտետի «Կենսաբանություն» ԳՀ ինստիտուտի գիտական կազմի թափուր պաշտոնները համալրելու նպատակով մրցութային ընտրության անցկացման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ կենսաբանության ֆակուլտետի դեկան, կ.գ.դ. Կարեն Ղազարյանը, կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի մրցութային հանձնաժողովի անդամ կ.գ.դ. Մարինե Փարսադանյանը:

Կ. Ղազարյանը հայտնեց, որ Կենդանիների էվոլյուցիայի և զոոնոգ հիվանդությունների ուսումնասիրությունների լաբորատորիայի գիտական ստորաբաժանման դեկավարի (1 դրույք) թափուր պաշտոնի համար դիմել է Կենդանիների էվոլյուցիայի և զոոնոգ հիվանդությունների լաբորատորիայի դեկավար՝ կ.գ.դ., պրոֆեսոր Մարինե Սեմյոնի Առաքելյանը, Մանրէաբանության, կենսաէներգետիկայի և կենսատեխնոլոգիայի լաբորատորիայի ավագ գիտաշխատողի (0,5 դրույք) թափուր պաշտոնի համար դիմել է Մանրէաբանության, կենսաէներգետիկայի և կենսատեխնոլոգիայի լաբորատորիայի ավագ գիտաշխատող, կ.գ.թ., դոցենտ Լիլիթ Սերգեյի Գաբրիելյանը, նույն լաբորատորիայի գիտաշխատողի (1 դրույք) թափուր պաշտոնի համար՝ նույն լաբորատորիայի գիտաշխատող, կ.գ.թ. Անահիտ Համբարձումի Շիրվանյանը, Կիրառական էկոլոգիայի և շրջակա միջավայրի հետազոտությունների լաբորատորիայի ավագ գիտաշխատողի (1 դրույք) թափուր պաշտոնի համար՝ Կիրառական էկոլոգիայի և շրջակա միջավայրի հետազոտությունների լաբորատորիայի ավագ գիտաշխատող PhD Արեհիշեկ Ռակեշ Կումար Սինխը և նույն լաբորատորիայի ավագ գիտաշխատողի (0,25 դրույք) թափուր պաշտոնի համար դիմել են 2 հավակնորդ՝ «Կենսաբանություն» ԳՀԻ Կիրառական էկոլոգիայի և շրջակա միջավայրի հետազոտությունների լաբորատորիայի գիտաշխատող կ.գ.թ., դոցենտ Լուսինե Ռաֆիկի Համբարյանը և Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Լեռնամետալուրգիայի և Քիմիական տեխնոլոգիաների ինստիտուտի Քիմիական տեխնոլոգիաների, բնապահպանության և կենսագործունեության անվտանգության ամբիոնի դոցենտ, տ.գ.դ. Աստղիկ Ռաֆիկի Սուքիասյանը:

Մ. Փարսադանյանը ծանոթացրեց ներկաներին հավակնորդների անձնական գործերին և փաստեց, որ համաձայն գիտական խորհրդի մրցութային մշտական հանձնաժողովի կարծիքի հավակնորդների գիտական գործունեությունը, գիտական աստիճանը և աշխատանքային ստաժը բավարարում են տվյալ պաշտոններին ներկայացվող պահանջներին:

ՈՐՈՇԵՑԻՆ. թեկնածությունները դնել փակ գաղտնի քվեարկության և ընտրել հաշվիչ հանձնաժողով:

Բաց քվեարկությամբ ընտրվեց հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով՝ *Աննա Ֆելիքսի Կարապետյան* (նախագահ)՝ ԵՊՀ մարդու ու կենդանիների մորֆոլոգիայի ու ֆիզիոլոգիայի ամբիոնի վարիչ, դոցենտ, կ.գ.թ., *Անժելա Աշոտի Մարգարյան*՝ ԵՊՀ գենետիկայի և բջջաբանության ամբիոնի վարիչ, ասիստենտ, կ.գ.թ., *Նաթելա Արթուրի Թարգյան*՝ ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի բակալավրիատի «Կենսաբանություն» կրթական ծրագրի 4-րդ կուրսի ուսանող:

ԼՍԵՑԻՆ՝ Փակ գաղտնի քվեարկություն անցկացնելուց հետո հաշվիչ հանձնաժողովի նախագահ Ա. Ֆ. Կարապետյանի հաղորդումը քվեարկության արդյունքների մասին:

Ֆակուլտետի գիտական խորհրդի 32 անդամներից ներկա էին 24 -ը:

Քվեարկվել են կենսաբանության ֆակուլտետի Կենսաբանություն ԳՀԻ-ի գիտական կազմի թափուր պաշտոնների հետևյալ 6 թեկնածուները:

Քվեարկությանը մասնակցել են ֆակուլտետի գիտական խորհրդի 24 անդամներ:

Բաժանվել է 24. քվեաթերթիկ:

Քվեատուփում առկա է 24 քվեաթերթիկ:

Ստորև ներկայացված են քվեարկության արդյունքները.

«Կենսաբանություն» ԳՀԻ-ի Կենդանիների էվոլյուցիայի և զոոնոգ հիվանդությունների ուսումնասիրությունների լաբորատորիայի գիտական ստորաբաժանման ղեկավարի (1 դրույք) թափուր պաշտոնի քվեարկության արդյունքները

N	Ազգանուն, անուն, հայրանուն	Կողմ	Դեմ	Անվավեր
1.	Առաքելյան Մարինե Սեմյոնի	24	0	0

«Կենսաբանություն» ԳՀԻ-ի Մանրէաբանության, կենսաէներգետիկայի և կենսատեխնոլոգիայի լաբորատորիայի ավագ գիտաշխատողի (0,5 դրույք) թափուր պաշտոնի քվեարկության արդյունքները

N	Ազգանուն, անուն, հայրանուն	Կողմ	Դեմ	Անվավեր
1.	Գաբրիելյան Լիլիթ Սերգեյի	24	0	0

«Կենսաբանություն» ԳՀԻ-ի Մանրէաբանության, կենսաէներգետիկայի և կենսատեխնոլոգիայի լաբորատորիայի գիտաշխատողի (1 դրույք) թափուր պաշտոնի քվեարկության արդյունքները

N	Ազգանուն, անուն, հայրանուն	Կողմ	Դեմ	Անվավեր
1.	Շիրվանյան Անահիտ Համբարձումի	24	0	0

«Կենսաբանություն» ԳՀԻ-ի Կիրառական էվոլյուցիայի և շրջակա միջավայրի հետազոտությունների լաբորատորիայի ավագ գիտաշխատողի (1 դրույք) թափուր պաշտոնի քվեարկության արդյունքները

N	Ազգանուն, անուն, հայրանուն	Կողմ	Դեմ	Անվավեր
1.	Սինխ Աբիշեկ Ռակել Կումար	23	0	1

«Կենսաբանություն» ԳՀԻ-ի Կիրառական էվոլյուցիայի և շրջակա միջավայրի հետազոտությունների լաբորատորիայի ավագ գիտաշխատողի (0,25 դրույք) թափուր պաշտոնի քվեարկության արդյունքները

N	Ազգանուն, անուն, հայրանուն	Կողմ	Դեմ	Անվավեր
1.	Համբարյան Լուսինե Ռաֆիկի	20	2	2
2.	Սուքիասյան Աստղիկ Ռաֆիկի	0	22	2

Փակ (գաղտնի) քվեարկության արդյունքներով`

1. Մարինե Սեմյոնի Առաքելյանը ընտրվել է Կենդանիների էվոլյուցիայի և զոոնոգ հիվանդությունների ուսումնասիրությունների լաբորատորիայի գիտական ստորաբաժանման ղեկավարի (1 դրույք) թափուր պաշտոնում:

2. **Լիլիթ Սերգեյի Գաբրիելյանը** ընտրվել է Մանրեաբանության, կենսաէներգետիկայի և կենսատեխնոլոգիայի լաբորատորիայի ավագ գիտաշխատողի (0,5 դրույք) թափուր պաշտոնում:
3. **Անահիտ Համբարձումի Շիրվանյանը** ընտրվել է Մանրեաբանության, կենսաէներգետիկայի և կենսատեխնոլոգիայի լաբորատորիայի գիտաշխատողի (1 դրույք) թափուր պաշտոնում:
4. **Արհիշեկ Ռակեշ Կումար Սինխը** ընտրվել է Կիրառական էկոլոգիայի և շրջակա միջավայրի հետազոտությունների լաբորատորիայի ավագ գիտաշխատողի (1 դրույք) թափուր պաշտոնում:
5. Կիրառական էկոլոգիայի և շրջակա միջավայրի հետազոտությունների լաբորատորիայի ավագ գիտաշխատողի (0,25 դրույք) թափուր պաշտոնում ընտրվել է **Լուսինե Ռաֆիկի Համբարյանը**:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հաստատել ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկության արդյունքները,

2. Փակ /գաղտնի/ քվեարկության արդյունքներով Կենդանիների էվոլյուցիայի և զոոնոգ հիվանդությունների ուսումնասիրությունների լաբորատորիայի գիտական ստորաբաժանման ղեկավարի (1 դրույք) թափուր պաշտոնում ընտրվել է Կենդանիների էվոլյուցիայի և զոոնոգ հիվանդությունների լաբորատորիայի ղեկավար՝ կ.գ.դ., պրոֆեսոր Մարինե Սեմյոնի Առաքելյանը, Մանրեաբանության, կենսաէներգետիկայի և կենսատեխնոլոգիայի լաբորատորիայի ավագ գիտաշխատողի (0,5 դրույք) թափուր պաշտոնում՝ Մանրեաբանության, կենսաէներգետիկայի և կենսատեխնոլոգիայի լաբորատորիայի ավագ գիտաշխատող, կ.գ.թ., դոցենտ Լիլիթ Սերգեյի Գաբրիելյանը, նույն լաբորատորիայի գիտաշխատողի (1 դրույք) թափուր պաշտոնում՝ նույն լաբորատորիայի գիտաշխատող, կ.գ.թ. Անահիտ Համբարձումի Շիրվանյանը, Կիրառական էկոլոգիայի և շրջակա միջավայրի հետազոտությունների լաբորատորիայի ավագ գիտաշխատողի (1 դրույք) թափուր պաշտոնում՝ Կիրառական էկոլոգիայի և շրջակա միջավայրի հետազոտությունների լաբորատորիայի ավագ գիտաշխատող PhD Արհիշեկ Ռակեշ Կումար Սինխը և նույն լաբորատորիայի ավագ գիտաշխատողի (0,25 դրույք) թափուր պաշտոնում՝ «Կենսաբանություն» ԳՀԻ Կիրառական էկոլոգիայի և շրջակա միջավայրի հետազոտությունների լաբորատորիայի գիտաշխատող կ.գ.թ., դոցենտ Լուսինե Ռաֆիկի Համբարյանը:

2. **ԼՍԵՑԻՆ՝** ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի առկա ուսուցմամբ ասպիրանտների տարեկան ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ կենսաբանության ֆակուլտետի ղեկան, կ.գ.դ., դոցենտ Կ. Ա. Ղազարյանը, առկա ուսուցմամբ ասպիրանտները և գիտական ղեկավարները:

Ասպիրանտները գիտական խորհրդի անդամներին սահիկաշարի միջոցով զեկուցեցին հաշվետու տարվա ընթացքում իրենց կողմից կատարված աշխատանքները: Գործուղման մեջ գտնվող ասպիրանտների հաշվետվություններն ու դրանց վերաբերյալ մասնագիտական կարծիքները հնչեցրեցին վերջիններիս գիտական ղեկավարները:

Ստորև բերված են հաշվետու ժամանակահատվածում առկա ուսուցման համակարգում սովորող և ատեստավորման ենթակա թվով 17 ասպիրանտների կողմից իրականացված գիտահետազոտական և ուսումնական աշխատանքների ամփոփ տեղեկատվությունը:

Յուրաքանչյուր ասպիրանտի կողմից ներկայացվեցին արձանագրված հիմնական արդյունքները, գիտական հրապարակումները և հետազոտական թեմայի շրջանակներում կատարված հետազոտական աշխատանքի մանրամասները:

1. ԵՊՀ Կենսաբանության ֆակուլտետի կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի առաջին տարվա առկա ուսուցմամբ ասպիրանտ Գոհար Սարգիսի Ազբեկյան (գիտական ղեկավար՝ Կ.Գ.Պ., պրոֆեսոր Կ. Ա. Թոշունյան):

Հաշվետու տարում պարտադիր և ընտրովի առարկաներից ասպիրանտի կողմից հավաքվել է ընդհանուր 27 կրեդիտ՝ հնարավոր 32-ից: Մագիստրատուրայի ուսումնառության տարիներին իրականացվել է *Saccharomyces cerevisiae* խմորասնկերի վայրի շտամների՝ ATCC 9804 և ATCC 13007, որոշ կենսաքիմիական և կենսաէներգետիկական պարամետրերի ուսումնասիրություն: Ստացված տվյալների հիման վրա հաշվետու տարում պատրաստվել և տպագրության է ուղարկվել մեկ գիտական հոդված Archives of Biochemistry and Biophysics (Q1) ամսագրում: Հաշվետու տարում իրականացվել են վերոնշյալ շտամների թթվածնի յուրացման, ածխաթթու գազի արտադրման, ինչպես նաև նյութափոխանակության ելանյութերի և վերջնանյութերի քանակական փոփոխությունների որոշումներ: Ասպիրանտը նշեց, որ ստացված տվյալները ներկայումս գտնվում են մշակման փուլում՝ հետագա գիտական հոդվածի պատրաստման նպատակով: Հաշվետու տարում իրականացվել է նաև *S. cerevisiae* խմորասնկերի վայրի BY4741 և մուտանտ շտամների՝ Δpma1-007, Δvma, Δtha ուսումնասիրություն: Մասնավորապես, ուսումնասիրվել են աճի տեսակարար արագության փոփոխությունները, աճի ընթացքում ֆիզիկաքիմիական ցուցանիշների (օքսիդա-վերականգնողական պոտենցիալ (ՕՎՊ), pH, օսմոլալություն) փոփոխությունները, ամբողջական բջիջների պլազմային թաղանթով պրոտոնային հոսքի արագությունը, ինչպես նաև նյութափոխանակության ելանյութերի և վերջնանյութերի քանակական փոփոխությունները՝ կախված աճի ընթացքում թթվածնի հասանելիությունից և pH-ից: FEMS MICRO MILAN 2025 (հուլիսի 14–17, Միլան, Իտալիա) և «Կենսաբանական գիտություններ և բնապահպանական լուծումներ՝ հանուն կայուն զարգացման նպատակների» (սեպտեմբերի 24–26, 2025, Երևան, Հայաստան) գիտաժողովներին մասնակցության արդյունքում տպագրվել են երկու գիտական թեզիսներ, ևս մեկ թեզիս ընդունվել է հրապարակման (EBEC 2026): Ասպիրանտը հանդիսանում է «Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր - 2025» մրցույթի շահառու:

(25AA-1F018 ծածկագիր): Ասպիրանտը ստացել է նաև TOEFL® iBT թեստի համապատասխան միավորը:

2. ԵՊՀ Կենսաբանության ֆակուլտետի կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի առաջին տարվա առկա ուսուցմամբ ասպիրանտ Ռիմա Հարությունյան (գիտական ղեկավար՝ Կ. Գ. Դ., պրոֆեսոր Ա. Ա. Փոլադյան):

Հաշվետու տարվա ընթացքում ասպիրանտի կողմից հավաքվել է 33 կրեդիտ, որից 12-ը պարտադիր, իսկ 21-ը կամընտրական դասընթացներից: Ուսումնասիրվել է *Cupriavidus necator* H16-ը և *Cupriavidus metallidurans* CH34 մանկների աճման պարամետրերը միջավայրի pH-ի տարբեր պայմաններում: Ուսումնասիրվել է նաև հիդրոգենազային ակտիվությունները միջավայրի տարբեր սթրեսների պայմաններում: Այս հետազոտական աշխատանքի արդյունքում պատրաստվել է մեկ թեզիս, որը պատասխանում է կենսաբանական կենսաքիմիայի 50-րդ FEBS միջազգային կոնգրեսին, որն անցկացվելու է Նիդերլանդների Մաասրիխտ քաղաքում: Ասպիրանտը հանդիսանում է «Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր – 2025» դրամաշնորհի շահառու (25AA-1F044 ծածկագիր):

3. ԵՊՀ Կենսաբանության ֆակուլտետի կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի առաջին տարվա առկա ուսուցմամբ ասպիրանտ Լիլիթ Գնելի Գրիգորյան (գիտական ղեկավար՝ Կ. Գ. Դ., պրոֆեսոր Կ. Ա. Թռչունյան):

Հաշվետու ժամանակահատվածում ասպիրանտի կողմից հավաքվել է 33 կրեդիտ: Իրականացվել են *Escherichia coli* մանրէի DH4100 ծնողական շտամի և մրջնաթթվային անցքուղիների տարբեր մուտացիաներով շտամներում աճման տեսակարար արագության որոշում միջավայրում գլյուկոզի տարբեր կոնցենտրացիաների (2 գ L^{-1} , 8 գ L^{-1}) և տարբեր թթվայնության ($\text{pH}=7,5$, $\text{pH} = 5,5$) պայմաններում: Ասպիրանտի կողմից բժիջներն աճեցվել են 2 գ L^{-1} գլյուկոզի կոնցենտրացիայի պայմաններում և կատարվել բջջաթաղանթով պրոտոնային հոսքի որոշում: 2025թ-ի օգոստոս-նոյեմբեր ամիսներին իրականացվել է մասնագիտական վերապատրաստում Գերմանիայի Մարտին-Լյութերի համալսարանի (Հալլե-Վիթթենբերգ) Կենսաբանության/մանրէաբանության ինստիտուտում: Ուսումնասիրությունների ընթացքում տպագրվել է 1 հոդված՝ «*Escherichia coli* FocA/B-dependent H^+ and K^+ fluxes: Influence of exogenous versus endogenous formate» վերնագրով Biophysical reports ամսագրում, ինչպես նաև 3 թեզիս՝ «The Impact of FocA Channel on ATPase Activity of *Escherichia coli* During Fermentation of Mixed Carbon Sources», «Effect of CRP global regulator on *Escherichia coli* ATPase activity under fermentation of different glucose concentrations» և «Impact of FNR Global Regulator on H^+ Flux in *Escherichia coli* During Fermentation of Varying Glucose Concentrations» վերնագրերով, որոնք ներկայացվել են համապատասխանաբար «Կենսաբանական գիտություններ և բնապահպանական լուծումներ՝ հանուն կայուն զարգացման նպատակներ» 2025, FEMS MICRO MILAN 2025 և ASM Microbe 2025 գիտաժողովներին: Մեկ հոդված

գտնվում է գրախոսման փուլում, ևս մեկը՝ նախապատրաստվում է տպագրության: Ասպիրանտը հանդիսանում է «Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր - 2025» մրցույթի շահառու (25AA-1F014 ծածկագիր):

4. ԵՊՀ Կենսաբանության ֆակուլտետի կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի առաջին տարվա առկա ուսուցմամբ ասպիրանտ Անի Ալեքսանդրի Հարությունյան (գիտական դեկավար՝ կ.գ.թ, դոցենտ Լ. Ս. Գաբրիելյան):

Ասպիրանտի կողմից նշվեց, որ ուսումնառության առաջին տարում մասնակցել է անհրաժեշտ պարտադիր և կամընտրական դասընթացներին: Առաջին կիսամյակում հավաքել է 24 կրեդիտ, երկրորդ կիսամյակի ավարտին նախատեսում է հավաքել ևս 9 կրեդիտ: Հաշվետու ժամանակահատվածում կատարվել է Հայաստանից մեկուսացված *Arthrospira platensis* Pc-005 ցիանաբակտերիայից արծաթի և ցինկի օքսիդի նանոմասնիկների կենսասինթեզի մեթոդի մշակում և ստացված նանոմասնիկների ֆիզիկաքիմիական հատկությունների ուսումնասիրում: Ուսումնասիրվել է նաև ստացված նանոմասնիկների հակամանրէային և հակասնկային ակտիվությունները: Հաշվետու տարում բանավոր զեկույցով հանդես է եկել ԵՊՀ-ում անցկացված «Կենսաբանական գիտություններ և բնապահպանական լուծումներ՝ հանուն կայուն զարգացման նպատակների» միջազգային գիտաժողովին: Պաստառային զեկույցով մասնակցել է «Նոր զարգացման միտումները քիմիայում-2025» գիտաժողովին: Ատենախոսական թեմայի մի հատված նախագծի տեսքով ներկայացվել է Ղազախստանի մայրաքաղաք Աստանայում կայացած «100 գաղափար ԱՊՀ-ի համար» միջազգային մրցույթի եզրափակիչ փուլին: Նախագիծը «Բժշկություն և առողջապահություն» անվանակարգում ճանաչվել է հաղթող: Հաշվետու ժամանակահատվածում ասպիրանտը հրապարակել է 3 թեզիս և 1 գիտական հոդված ՄԳՇ-ում:

5. ԵՊՀ Կենսաբանության ֆակուլտետի կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի երկրորդ տարվա առկա ուսուցմամբ ասպիրանտ Լիանա Կամոյի Անիկյան (գիտական դեկավար՝ կ.գ.դ., պրոֆեսոր Կ. Ա. Թոշոնյան):

Ասպիրանտի կողմից նշվեց, որ շարունակվել են գիտահետազոտական աշխատանքները՝ ուղղված *Saccharomyces cerevisiae* խմորասնկերի կենսաքիմիական և կենսատեխնոլոգիական առանձնահատկությունների ուսումնասիրմանը՝ տարբեր ածխածնային աղբյուրների պայմաններում: Որոշվել են վայրի և մուտանտ շտամների ալկոհոլ դեհիդրոգենազ ֆերմենտի ակտիվությունը և H^+ -ային հոսքը: Իրականացվել է միտոքոնդրիումների անջատում և ԱԵՖ-ազային ակտիվության որոշում թթվածնային ու թթվածնի մասնակի սահմանափակման պայմաններում: Ուսումնասիրվել է նաև օրգանական թթուների, շաքարների և կենսաէթանոլի առաջացումը ԲԿԳԲ-ԶՍ և ԳԲ-ԶՍ մեթոդներով: Հատուկ ուշադրություն է դարձվել կաթնամթերքի թափոններում խմորասնկերի աճեցման առանձնահատկություններին և տարբեր pH-ների ($pH=3,0$; $pH=5,0$; $pH=6,5$), գլյուկոզի կոնցենտրացիաների (0,5%, 2%) ու թթվածնի հասանելիության պայմաններում աճի և

ֆիզիկաքիմիական ցուցանիշների փոփոխություններին: Ստացված արդյունքները ներկայացվել են տեղական և միջազգային գիտաժողովներում: Նշվեց նաև, որ ասպիրանտը մասնակցել է «Կենսաբանական գիտություններ և բնապահպանական լուծումներ՝ հանուն կայուն զարգացման նպատակների» գիտաժողովին, ինչպես նաև FEMS MICRO MILAN 2025 միջազգային գիտաժողովին, որը կազմակերպվել էր Federation of European Microbiological Societies-ի կողմից Միլանում: Գիտաժողովներին ներկայացված աշխատանքները հնարավորություն են տվել քննարկելու հետազոտության արդյունքները միջազգային մասնագիտական շրջանակներում և ձեռք բերելու նոր գիտական համագործակցություններ: Նախատեսվում է նաև մասնակցություն միջազգային հետևյալ գիտաժողովներին՝ EBEC 2026 (Ստոկհոլմ, Շվեդիա) և PYFF 9 (Վալենսիա, Իսպանիա): Հետազոտությունների արդյունքներով հրապարակվել են հոդվածներ բարձր վարկանիշ ունեցող Q1 գիտական ամսագրերում, մասնավորապես՝ Biochimica et Biophysica Acta (BBA) - Bioenergetics և Cleaner Engineering and Technology ամսագրերում:

6. ԵՊՀ Կենսաբանության ֆակուլտետի կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի երկրորդ տարվա առկա ուսուցմամբ ասպիրանտ Ալվարդ Մկրտիչի Մինասյան (գիտական ղեկավար՝ կ.գ.դ., առաջատար գիտաշխատող, դոցենտ Ն. Շ. Սահակյան):

Ասպիրանտը նշեց, որ հաշվետու տարում իրականացվել է՝ *Vaccinium myrtillus* L. տերևներից ստացված լուծամզվածքի հակաօքսիդանտային ակտիվության գնահատում՝ ազատ ռադիկալի կապման մեթոդով՝ 2,2-դիֆենիլ-1-պիկրիլիդիդրազիլի (ԴՖՊՀ) վերականգնման ռեակցիայի միջոցով, երկաթի իոնների վերականգնման ռեակցիայի միջոցով (FRAP), ֆոսֆոմոլիբդենային մեթոդով, մետաղ- խելատացնող ակտիվության որոշմամբ, սուպերօքսիդ ռադիկալի չեզոքացման միջոցով, հիդրօքսիլ ռադիկալի չեզոքացման միջոցով: Իրականացվել է միկրոգլիալ BV-2 Wt և Acox1^{-/-} բջիջների կենսունակության և լուծամզվածքի աշխատանքային կոնցենտրացիաների որոշում, ACOX1 ֆերմենտի ակտիվության փոփոխության ուսումնասիրություն, կատալազի ակտիվության փոփոխության գնահատում, Catalase գենի էքսպրեսիայի վերլուծություն՝ RT-qPCR և Վեսթերն Բլոթինգ մեթոդների կիրառմամբ, NO-ի քանակության որոշում բջջային մոդելում iNOS, Abcd1, Il-1 β , Tnf α գեների էքսպրեսիայի ուսումնասիրություն՝ RT-qPCR մեթոդով: Ասպիրանտը մասնակցել է «FEMS MICRO Milan 2025» միջազգային գիտաժողովին, բանավոր գեկուցմամբ հանդես է եկել «Կենսաբանական գիտություններ և բնապահպանական լուծումներ՝ հանուն կայուն զարգացման նպատակների» միջազգային գիտաժողովում: Նախատեսվում է մասնակցել «FEBS Young Scientists' Forum»-ին և FEBS-ի 50-րդ կոնգրեսին: Ալվարդ Մինասյանը հանդիսանում է «Բուսական ծագման մետաբոլիտների հակաօքսիդիչ ակտիվության մոլեկուլային մեխանիզմները միկրոգլիալ բջիջների կուլտուրաներում» 24AA-1F018 ծածկագրով «Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր – 2024» դրամաշնորհի և ԵՊՀ ճանապարհորդական դրամաշնորհի՝ Calouste Gulbenkian Foundation – Conference and Travel Grants ARMENIA 2025 շահառու: Տպագրել է 1 հոդված, ևս մեկը՝ նախատեսված է տպագրության:

7. ԵՊՀ Կենսաբանության ֆակուլտետի կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի երկրորդ տարվա առկա ուսուցմամբ ասպիրանտ Էդիտա Էդուարդի Նադիրյան (գիտական ղեկավար՝ կ.գ.թ., ասիստենտ Ն. Վ. Ավթանդիլյան):

Քանի, որ ասպիրանտը գործուղման էր և հաշվետվությունը ներկայացրեց գիտական ղեկավար Ն. Վ. Ավթանդիլյանը: Նա նշեց, որ հաշվետու տարվա ընթացքում ասպիրանտի կողմից իրականացվել է *in vivo* հետազոտությունների շարք, որի շրջանակներում լաբորատոր արու առնետների մոտ առաջացվել է շաքարախտի մոդել՝ խթանված USQ/ԲՃՍ (Ստրեպտոզոտոցին+ քարձր ճարպային սնունդ)–ով: Հետազոտության ընթացքում դիտարկվել է *Rumex obtusifolius* դեղաբույսի էթանոլային լուծամզվածքի և դրա կազմում առկա ակտիվ միացության՝ էմոդինի, ինչպես նաև դասական հակաշաքարախտային դեղամիջոց մետֆորմինի և L-արգինինի նյութափոխանակային ուղու մրցակցային արգելակիչ՝ nor-NOHA-ի ազդեցությունը հակաշաքարախտային թերապիայում: Կատարվել է Western Blot հետազոտություն՝ շաքարախտին բնորոշ IR, Caspase-3, iNOS, PI3K, AKT սպիտակուցների քանակական փոփոխությունների և ազդեցության մեխանիզմի պարզաբանման համար: Ասպիրանտը պաստառային զեկուցմամբ մասնակցել է FEBS 49-րդ կոնգրեսին (Թուրքիա, Ստամբուլ): Տպագրվել է 1 թեզիս: Ստացված տվյալների հիման վրա պատրաստվել է 1 հոդված, որը նախատեսվում է ուղարկել տպագրման: Նշվեց նաև, որ ասպիրանտը հանդիսանում է ՀՀ ԿԳՄՄՆ ԲԿԳԿ «Մասնագիտական վերապատրաստում-2025» մրցույթի շահառու, որի շրջանակներում ներկայումս գտնվում է Գերմանիայի Սաարլանդի համալսարանում:

8. ԵՊՀ Կենսաբանության ֆակուլտետի կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի երրորդ տարվա առկա ուսուցմամբ ասպիրանտ Միլվարդ Կարենի Թադևոսյան (գիտական ղեկավար՝ կ.գ.դ., առաջատար գիտաշխատող, դոցենտ Ն. Շ. Սահակյան):

Ասպիրանտի հաշվետվությունը ներկայացվեց ղեկավարի կողմից, նշելով, որ հաշվետու տարում հանձնել է մասնագիտական (որակավորման) քննության առաջին և երկրորդ մասերը և ստացել գերազանց գնահատական: Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են *Mentha arvensis* բույսի եթերայուղի քիմիական կազմի գերակշիռ մասը կազմող (70%) միացության՝ մենթոլի հակաբակտերիական ազդեցության մեխանիզմների ուսումնասիրությունը հակաբիոտիկ-կայուն աղիքային ցուպիկի վրա: Իրականացվել է մենթոլի երկու կոնցենտրացիաների ազդեցության ուսումնասիրություն կանամիցին կայուն և վայրի տիպի շտամերի թաղաթային պոտենցիալի, օքսիդավերականգնողական պոտենցիալի, արտաբջջային pH-ի, հակաօքսիդանատային համակարգի ֆերմենտների վրա աերոբ և անաերոբ պայմաններում: Իրականացվել է նաև աղիքային ցուպիկի ԱԵՖազային համակարգի տարբեր ենթամիավորներ չպարունակող մուտանտների թաղանթներում պրոտոնային և կալիումական հոսքերի վրա մենթոլի ազդեցության ուսումնասիրություն: Հաշվետու տարում ասպիրանտը մասնակցել է «FEMS MICRO Milan 2025»

միջազգային (Միլան, Իտալիա) և VAAM 2026 - Ընդհանուր և կիրառական մանրէաբանության ասոցիացիայի գիտաժողովներին (Բեռլին, Գերմանիա) պաստառային զեկուցումներով, Biological Sciences and Environmental Solutions for the Achievement of Sustainable Development Goals գիտաժողովին բանավոր զեկուցմամբ: Հաշվետու տարում տպագրվել է 1 գիտական հոդված Q1 քառորդի ամսագրում և 3 թեզիսներ, նախատեսվում է տպագրության հանձնել ևս 2 գիտական հոդված:

9. ԵՊՀ Կենսաբանության ֆակուլտետի կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի երրորդ տարվա առկա ուսուցմամբ ասպիրանտ Թամարա Էդուարդի Աբաղյան (գիտական դեկավար՝ կ.գ.դ., պրոֆեսոր Կ. Ա. Թռչունյան):

Հաշվետու տարվա ընթացքում ասպիրանտի կողմից իրականացվել են օրգանական թթուներից՝ մրջնաթթվի ազդեցության ուսումնասիրությունները գրամբացասական *Escherichia coli* BW25113 և դրա մուտանտներ՝ *E. coli* Δ *fdhF* և *E. coli* Δ *ldhA* շտամների վրա: Ուսումնասիրությունները իրականացվել են բացահայտելու այդ մուտանտներում բացակայող ֆերմենտների կապը մրջնաթթվի առկայության և բացակայության դեպքում, և ավելի մանրամասն ուսումնասիրել դրանց կարևորությունն ու ազդեցությունը *E. coli*-ի նյութափոխանակության վրա: Մրջնաթթուն աճման միջավայր է ավելացվել 10, 20 և 30 մՄ կոնցենտրացիաներով: Ուսումնասիրվել է թթուների ազդեցությունը մարենների աճի տարբեր փուլերում՝ սկզբնական, վաղ լոգարիթմական և ուշ լոգարիթմական փուլերում: Ուսումնասիրվել է դրանց ազդեցությունը աճի տեսակարար արագության (μ), օքսիդավերականգնողական պոտենցիալի, pH-ի, նյութափոխանակության և ֆերմենտների (հիդրոգենազ, մրջնաթթուդեհիդրոգենազ) ակտիվության վրա: Ինչպես նախատեսված էր, խմորման պայմաններում նշված շտամներում որոշվել է նյութափոխանակության առանձնահատկությունները կախված թթուների առկայությունից և բացակայությունից: Ուսումնասիրությունների արդյունքում տպագրվել է 3 թեզիս՝ առաջինը՝ «Proton and Potassium Flux Alterations in the Presence of Propionic Acid in Gut-Isolated *Escherichia coli*» վերնագրով, որն ներկայացվել է հունիսի 19-ից հունիսի 23-ը ԱՄՆ-ում (Լոս Անջելես) տեղի ունեցած ASM Microbe 2025 գիտաժողովին, երկրորդը՝ «Impact of short-chain fatty acids on the anaerobic growth of *Escherichia coli* K12 and *Enterococcus hirae* ATCC9790» վերնագրով, որն ներկայացվել է հուլիսի 14-17-ը Իտալիայում (Միլան) տեղի ունեցած FEMS 2025 միջազգային գիտաժողովին և երրորդը՝ «The Impact of Different Concentrations of Formate and Lactate on *Escherichia coli* Growth Properties and H₂ Production» վերնագրով, որն ներկայացվել է 2025թ. սեպտեմբերի 24-ից 26-ը Հայաստանում (Երևան) տեղի ունեցած միջազգային գիտաժողովին: Ներկայումս ստացված տվյալները մշակված են և ամփոփված հոդվածի տեսքով, որը պլանավորվում է ուղարկել միջազգային բարձր ազդեցության գործակցով, գրախոսվող ամսագիր: Գրախոսման փուլում է գտնվում ևս մեկ հոդված՝ «Spatial Redox Imbalance and Microbial Bioenergetic Remodeling Along the Intestine in a Propionate-Induced Model Relevant to Autism Spectrum Disorder» վերնագրով, Free Radical Biology and Medicine ամսագրում (Q1):

10. ԵՊՀ Կենսաբանության ֆակուլտետի կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի երրորդ տարվա առկա ուսուցմամբ ասպիրանտ Տիգրան Մակեդոնի Ալեքսանյան (գիտական ղեկավար՝ կ.գ.թ., դոցենտ Ի.Լ. Բազուկյան):

Ասպիրանտի հաշվետվության վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացրեց կենսաքիմիայի, մանրէաբանության ամբիոնի վարիչ, կ.գ.դ., պրոֆեսոր Աննա Փոլադյանը, նշելով, որ հաշվետու տարվա ընթացքում Տիգրան Ալեքսանյանի կողմից կատարված աշխատանքները շարունակվել են համաձայն օրացուցային պլանի: Մարդու պապիլոմավիրուսով վարակված բուժառուների հեշտոցային միկրոբիոմից անջատվել են կաթնաթթվային բակտերիաներ, ուսումնասիրվել են դրանց հակաբակտերիական, հակասնկային, հակախմորասնկային հատկությունները, ադիեզիայի ունակությունը: Հաջորդիվ, այդ մանրէները նույնականացվել են MALDI-TOF MS համակարգի միջոցով: Ստացված նույնականացման արդյունքները համեմատվել են ինչպես Bruker արտադրողի, այնպես էլ Գենտի համալսարանի BCCM/LMG մանրէային հարուստ հավաքածուի տվյալների հետ: Սպիտակուցային սպեկտրների տվյալները վերլուծվել են BioNumerics համակարգչային ծրագրի կիրառմամբ, որի շնորհիվ նմանության հիման վրա կառուցվել են կլաստերներ: MALDI-TOF MS –ի արդյունքների հիման վրա իրենցից առավել հետաքրքրություն ներկայացնող իզոլատներն ընտրվել են հետագա ուսումնասիրության նպատակով: Հաշվի է առնվել ինչպես ցուցաբերած հակագոնիստական ակտիվությունը, այնպես էլ իզոլատների պրոբիոտիկ ներուժը: Գենոմի ամբողջական սեքվենավորման նպատակով ԴՆԹ-ի անջատումն իրականացվել է Promega Maxwell համակարգի օգնությամբ: Պատահական զեկուցմամբ ասպիրանտը մասնակցել է FEBS-2025 (Ստամբուլ), FEMS-2025 (Միլան) և Կենսաբանական գիտություններ և բնապահպանական լուծումներ՝ հանուն կայուն զարգացման նպատակների – 2025 (Երևան) գիտաժողովներին: Հաշվետու տարում ասպիրանտը հանդիսանում է համահեղինակ մեկ գիտական հոդվածի՝ հրատարակված Q2 միջազգային ամսագրում: Ընդհանուր առմամբ, համահեղինակ է գիտական 3 հոդվածի, գրքի մեկ գլխի և 9 թեզիսի: Ուսումնառության ընթացքում հավաքել է անհրաժեշտ բոլոր 32 կրեդիտները:

11. ԵՊՀ Կենսաբանության ֆակուլտետի կենդանաբանության ամբիոնի առաջին տարվա առկա ուսուցմամբ ասպիրանտ Արևիկ Անդրանիկի Ղումաջյան (գիտական ղեկավար՝ կ.գ.դ., պրոֆեսոր Մ. Ս. Առաքելյան):

Հաշվետու ժամանակահատվածում Արևիկ Ղումաջյանի կողմից հավաքվել է 27 կրեդիտ (պարտադիր և կամքնորական առարկաներ և պրակտիկա): Ասպիրանտը ներգրավված է կենդանաբանության ամբիոնի պրոֆեսոր, կ.գ.դ. Մարինե Առաքելյանի օգնական: Նրա կողմից իրականացրվել է Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի ինստիտուտի միջատաբանական հավաքածուի ուսումնասիրություն և թվայնացում՝ նկարելով և վաուչերային համարներ տրամադրելով 49 արկղի շուրջ 4900 նմուշի: 2026 թվականի մարտից մայիս ժամանակահատվածում վերապատրաստվել է Կարլի համալսարանում, որտեղ ուսումնասիրել է

երկրաչափական մորֆոմետրիայի մեթոդը, ինչպես նաև կենդանիների վրա իրականացվող լաբորատոր և դաշտային փորձերի նախագծման և տվյալների հավաքագրման առանձնահատկությունները: Ընթացքի մեջ են մի շարք գիտական աշխատանքներ, այդ թվում Հայաստանի Formicidae և Lepidoptera խմբերի ցանկերի կազմումը, ինչպես նաև Հայաստանում նոր ինվազիվ տեսակի՝ *Cydalima perspectalis* գրանցման ուղղությամբ աշխատանքները: Արևիկ Դոմաշյանը մասնակցել է նաև «Biological Sciences and Environmental Solutions for the Achievement of Sustainable Development Goals» միջազգային գիտաժողովին: Ասպիրանտը հանդիսանում է «Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտություններին աջակցության ծրագիր - 2025»-ի դրամաշնորհի շահառու «Ecological and Phylogenetic Characteristics of Selected Pest Insects of Armenia» թեմայով, ծածկագիր՝ 25AA-1F016:

12. ԵՊՀ Կենսաբանության ֆակուլտետի կենդանաբանության ամբիոնի երկրորդ տարվա ստկա ուսուցմամբ ասպիրանտ Մանան Վարազդատի Ասիկյան (գիտական ղեկավար՝ կ.գ.թ. Ս. Ա. Աղայան):

Հաշվետու տարվա ընթացքում ասպիրանտի կողմից իրականացվել են լայնածավալ դաշտային և լաբորատոր հետազոտություններ՝ ուղղված թռչունների մակաբուծային հարուցիչների տարածվածության և մոլեկուլային ախտորոշման ուսումնասիրությանը: Հետազոտությունների արդյունքների հիման վրա ասպիրանտի կողմից պատրաստվել են գիտաժողովի 2 նյութեր՝ «Invasion of *Arion vulgaris* and its Projected Ecological Impact in Armenia», «A Pilot PCR Screening of *Toxoplasma gondii* in Birds of Armenia» (պաստարային զեկույցներ), որոնք ներկայացվել են միջազգային գիտական հարթակներում: Ասպիրանտը մասնակցել է EUFLYNET COST Action (CA22117) առցանց միջազգային աշխատաժողովին՝ որպես Հայաստանի ներկայացուցիչ, որը տեղի է ունեցել 2026 թվականի փետրվարի 23-ից 27-ը (Ավստրիա, Վիեննա): Հաշվետու տարվա ընթացքում «Erasmus+» ծրագրի շրջանակում ասպիրանտի կողմից իրականացվել է 10 օրյա մասնագիտական վերապատրաստում Բոնի համալսարանում՝ կատարելագործելով մոլեկուլային կենսաբանության և լաբորատոր հետազոտությունների հմտությունները: Մ. Ասիկյանը հանդիսանում է ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի «Ասպիրանտների և երիտասարդ հայցորդների հետազոտությունների աջակցության ծրագիր - 2024» և ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից հայտարարված «Մասնագիտական վերապատրաստում 2025» մրցույթների շահառու: Վերապատրաստման ծրագրի շրջանակում ասպիրանտը երկու ամսով նախատեսում է գործուղվել Չեխիայի Օստրավայի համալսարան: Հաշվետու տարվա ընթացքում Մ. Ասիկյանը ավարտել է ասպիրանտական կրթական բաղադրիչի գրեթե ամբողջ ծավալը՝ հավաքելով 31 կրեդիտ՝ հնարավոր 32-ից: Պատրաստվել են երկու գիտական հոդվածներ, որոնք գտնվում են գրախոսության փուլում միջազգային գիտական ամսագրերում:

13. ԵՊՀ Կենսաբանության ֆակուլտետի կենդանաբանության ամբիոնի երրորդ տարվա առկա ուսուցմամբ ասպիրանտ Տաթևիկ Լեոնիկի Հարությունյան (գիտական ղեկավար՝ կենդանաբանության ամբիոնի դոցենտ, կ.գ.թ. Ա.Ս. Ղազարյան):

Հաշվետու տարվա ընթացքում ասպիրանտի կողմից իրականացվել են դաշտային աշխատանքներ, որոնց ընթացքում բռնվել են ձեռքաթևավորների 3 տեսակների առանձնյակներ՝ Վայոց Ձորի և Տավուշի մարզերում, առանձնյակներից վերցվել են ԴՆԹ և կղանքի նմուշներ: Ձեռքաթևավորների էխոլոկացիայի ուսումնասիրության համար ձայնագրվել են 42 668 ձայն, որոնք հետագայում նույնականացվել, դասակարգվել և վերլուծվել են համապատասխան ծրագրերով: Ասպիրանտը հանդիսանում է ԵԳԱԾ «Գիտահետազոտական աշխատանքի իրականացման օժանդակ ռեսուրսների ձեռքբերման» և «Արտերկրի գիտնականների կարճատև այցելություններ ՀՀ գիտահետազոտական կազմակերպություններ» դրամաշնորհների շահառու: ԿԳՄՍ ԲԿԳԿ «Մասնագիտական վերապատրաստում-2025» ծրագրի շրջանակում Տաթևիկ Հարությունյանը 2026թ հունվարի 16-ից ապրիլի 14-ը վերապատրաստվել է Գերմանիայի Բեռլինի բնության պատմության թանգարանի Էվոլյուցիոն Էթոլոգիայի լաբորատորիայում: Վերապատրաստման ավարտին պատրաստվել է մեկ գիտական հոդված, որը գտնվում է գրախոսման փուլում, իսկ երկրորդ հոդվածը գտնվում է պատրաստման փուլում:

14. ԵՊՀ Կենսաբանության ֆակուլտետի էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնի առաջին տարվա առկա ուսուցմամբ ասպիրանտ Սակշի Սատիշ Սինխ (գիտական ղեկավար՝ կ.գ.դ. Կ.Ա. Ղազարյան):

Հաշվետու ժամանակահատվածում ասպիրանտը հավաքվել է 32 կրեդիտ: Կատարվել է ցորենի (*Triticum aestivum* L.) և գարու (*Hordeum vulgare* L., «Gayane» զենոտիպ) աճեցում ջերմոցային պայմաններում՝ համապատասխան մշակումներով (T1–T20): Ասպիրանտի կողմից նշվեց, որ բույսերը ենթարկվել են համակցված աղայնության (չաղակալված, թույլ, միջին և բարձր մակարդակներ) և չորային սթրեսի, ինչպես նաև հողի բարելավման միջոցների ազդեցությանը՝ կենսածուխ (1.5%), խմորիչ պարունակող օրգանական թափոնի էքստրակտ (FLSE), միկոբիզա և ազոտոբակտերիաներ: Գրանցվել են մորֆոլոգիական, ֆիզիոլոգիական, կենսաքիմիական և իոնային ցուցանիշներ, քլորոֆիլի պարունակության ինդեքսը (CCI), հակաօքսիդանտային ֆերմենտները (SOD, CAT), MDA-ն, իոնների կուտակումը (Na^+ , K^+ , Ca^{2+}) և միկրո- և մակրոէլեմենտների վերլուծությունը: Մեկ տարվա ընթացքում ասպիրանտը հրապարակել է 3 գրքի գլուխ և 1 թեզիս՝ Singh, O., Shahi, U. P., Singh, V., Singh, S., & Derdzyan, T. (2026). Introduction to Biochar. In *Advances in environmental engineering and green technologies book series* (pp. 51–88). (<https://doi.org/10.4018/979-8-3693-7006-3.ch003>), Singh, O., Singh, S., Shahi, U. P., Singh, V., Singh, K. K., Singh, S., Derdzyan, T., & Sousa, J. R. (2026). Nano-Biochar in sustainable agriculture. In *Advances in environmental engineering and green technologies book series* (pp. 195–220). (<https://doi.org/10.4018/979-8-3693-7006-3.ch007>), Singh, S., Singh, A., Singh, R., Sousa, J., & Ghazaryan, K. (2026). Global Scientific

Trends in Biochar Applications and Research for Salinity and Drought Stresses Management: A Bibliometric Perspective. Biological Science and Innovation for Achieving the Sustainable Development Goals, 1(1), 16. (<https://doi.org/10.4018/979-8-3373-1524-9>):

15. ԵՊՀ Կենսաբանության ֆակուլտետի էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնի երրորդ տարվա առկա ուսուցմամբ ասպիրանտ Աննա Սամվելի Հարությունյան (գիտական ղեկավար՝ կ.գ.դ. Կ. Ա. Ղազարյան):

Ասպիրանտի կողմից նշվեց, որ հաշվետու տարվա ընթացքում իրականացվել են վեգետացիոն փորձեր, որոնց շրջանակում գնահատվել են նախորդ տարիների ուսումնասիրությունների արդյունքում լավագույն տվյալներ ցուցաբերած մշակաբույսերի՝ մասնավորապես ցորենի և վարսակի, աղակալված հողերի պայմաններում դիմացկունությունը, աղազեծման ներուժը, ինչպես նաև տարբեր նանոպարարտանյութերի կիրառման ազդեցությունը բույսերի մորֆոլոգիական, ֆիզիոլոգիական և կենսաքիմիական ցուցանիշների վրա: Տպագրվել են 1 գիտական հոդված տեղական «Proceedings of the YSU B: Chemical and Biological Sciences» ամսագրում՝ առանց համահեղինակների, 1 գրքի գլուխ, ևս մեկը տպագրման փուլում է: Գրախոսման փուլում են 4 գիտական հոդվածներ: Տպագրվել են 2 գիտաժողովի նյութեր, որոնք բանավոր զեկույցով ներկայացվել են «Biological Sciences and Environmental Solutions for the Achievement of Sustainable Development Goals (SDGs)» (Երևան, Հայաստան) և «International Conference on Environmental Science and Technology (CEST)» (Կոս, Հունաստան) միջազգային գիտաժողովներում: Հաշվետու տարվա ընթացքում ասպիրանտը մասնակցել է «Անգլերեն լեզվի» պարտադիր դասընթացին, հավաքելով 4 կրեդիտ (դասընթացների մասնակցությամբ գումարային կրեդիտների քանակը՝ 33):

16. ԵՊՀ Կենսաբանության ֆակուլտետի գենետիկայի և բջջաբանության ամբիոնի երկրորդ տարվա առկա ուսուցմամբ ասպիրանտ Լիլի Ավետիսի Քալաշյան (գիտական ղեկավար՝ կ.գ.թ., դոցենտ Տ. Ա. Հարությունյան):

Լիլի Քալաշյանը նշեց, որ հաշվետու ժամանակաշրջանում «ԲԵՆԴԼ» սինքրոտրոնային հետազոտությունների ինստիտուտում ուսումնասիրվել է էլեկտրոնային փնջերի ճառագայթման ազդեցությունը ԴՆԹ վնասվածքների և բջիջներում օքսիդային սթրեսի մակաձման վրա: ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի «Ասպիրանտների և Երիտասարդ Հայցորդների Հետազոտությունների Աջակցության Ծրագիր - 2024» շրջանակներում «Էքզոսոմների արգելակիչների կիրառումը ճառագայթմամբ մակաձված ԴՆԹ-ի անկայունության մակարդակի պոտենցիալ բարձրացման նպատակով քաղցկեղային բջիջներում» գիտական թեմայով իրականացվել է նորմալ և քաղցկեղային բջիջներում արագացված էլեկտրոնների փնջերով ճառագայթմամբ մակաձված ԴՆԹ վնասվածքների և օքսիդատիվ սթրեսի գնահատում: Նշվեց նաև, որ Լ. Ա. Քալաշյանն 2025-2026 ուս. տարվա ընթացքում ժամավճարային հիմունքներով կատարել է 95 ժամ ուսումնական բեռնվածություն՝ իրականացնելով գործնական ժամեր կենսաբանության

ֆակուլտետի բակալավրիատում դասավանդվող «Գենետիկայի և բջջի կենսաբանության հիմունքներ և հետազոտության պլանավորում», «Ընդհանուր և էվոյուցիոն գենետիկա» և «Մոլեկուլային բջջաբանություն և գենետիկա» առարկաներից: Հաշվետու ժամանակահատվածում տպագրվել է 1 հոդված՝ «Human Gene» միջազգային հանդեսում:

17. ԵՊՀ Կենսաբանության ֆակուլտետի բուսաբանության և սնկաբանության ամբիոնի երկրորդ տարվա առկա ուսուցմամբ ասպիրանտ Մարգարիտա Գևորգի Մկրտումյան (գիտական ղեկավար՝ կ.գ.դ. Ս.Գ. Նանագյույան):

Մարգարիտա Մկրտումյանը նշեց, որ հաշվետու տարվա ընթացքում ուսումնասիրվել է ԵՊՀ պրոֆեսոր Լ. Ղարիբջանյանի անվան պատմության, Ավ. Բսահակյանի անվան և Մ. Սարյանի անվան տուն թանգարանները, Երվանդ Քոչարի թանգարանը ինչպես նաև Լոռու մարզ ք. Ստեփանավանում գտնվող Ստեփան Շահումյանի տուն թանգարանը: Գնահատվել է նշված թանգարանների օդի աղտոտվածության աստիճանը և իրականացվել միկրոմիցետների նույնականացում (45 տեսակ), տարանջատելով պաթոգեն տեսակները: Մանրադիտակային սնկերի պահպանման և հետագա հետազոտությունների համար ստեղծվել է որոշ միկրոմիցետների մաքուր կուլտուրաների բանկ: Ասպիրատոր սարքի օգնությամբ որոշվել է նշված թանգարանների օդի աղտոտվածության աստիճանը: Կատարվել է Artemisia, Thymus, Geranium, Salvia, Origanum ցեղերի տեսակների հավաք, (Տավուշի մարզի Դիլիջան քաղաք, Գեղարքունիքի մարզի Ծովազյուղ, Կոտայքի մարզի Ծաղկաձոր քաղաք և Լոռու մարզի Գյուլագարակ համայնք): Եթերայուղերը թորվել են AOD-S10 լաբորատոր համակարգի օգնությամբ: Նշվեց նաև, որ ուսումնառության ընթացքում ասպիրանտը հավաքել է 42 կրեդիտ: Տպագրվել է 1 թեզիս, ևս 1 թեզիս և 1 հոդված ներկայացվել են տպագրության և 2 թեզիս նախատեսվում է ներկայացնել 2 կոնֆերանսներին, որոնք տեղի կունենան հաջորդ տարի՝ European Mycological Congress, ISEO (International Symposium on Essential Oils): Ասպիրանտը նաև հայտ է ներկայացրել «Մասնագիտական վերապատրաստում 2026» մրցույթին: Դրական արդյունքի դեպքում նախատեսվում է մեկնել Սերբիայի Նովի Սադի համալսարան երկամսյա վերապատրաստման, որի շրջանակում նախատեսվում է իրականացնել միկրոմիցետների մոլեկուլադենետիկական նույնականացում ժամանակակից մեթոդների կիրառմամբ:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաշվի առնելով հաշվետու ժամանակահատվածում ասպիրանտների կողմից կատարած աշխատանքները և ամբիոնների կարծիքները՝ ատեստավորել առկա ուսուցմամբ վերոնշված բոլոր ասպիրանտներին:

3. ԼՍԵՑԻՆ՝ «Կենսաբանություն» ԳՀԻ Մանրէաբանական կենսավերականգնման խմբի կրտսեր գիտաշխատող, հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Սոնա Հազարապետի Նիկոլյանի ՀՀ ԿԳՄՄՆ ԲԿԳԿ «Մասնագիտական վերապատրաստում 2025» մրցույթի շրջանակներում իրականացվող «Ախթալայի պոչամբար նմուշներից մեկուսացված, մետաղակայուն *Pseudomonas aeruginosa*

A1W3 շտամի Zn և Cd մետաղների նկատմամբ կայունության մեխանիզմների գնահատումը մոլեկուլային կենսաբանության մեթոդների կիրառմամբ» 25PTS-1F028 ծածկագրով նախագծի հաշվետվության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ «Կենսաբանություն» ԳՀԻ տնօրեն, կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի պրոֆեսոր, կ.գ.դ. Կարեն Թոշունյանը, կրտսեր գիտաշխատող, ասպիրանտ Սոնա Նիկոլյանը: Վերջինս նշեց, որ վերապատրաստումը իրականացվել է Ժնևի համալսարանում և ծրագրի շրջանակներում իրականացվել է *Pseudomonas aeruginosa* A1W3 (մետաղներով ադոտոված միջավայրից մեկուսացված) և *Pseudomonas aeruginosa* PAO1 (կլինիկական նմուշից մեկուսացված) շտամերի մետաղակայունության և վիրուլենտության հատկությունների ֆենոտիպային և գենետիկական մակարդակով ուսումնասիրություն: Մասնավորապես որոշվել են երկու շտամերի նվազագույն արգելակող կոնցենտրացիաները նիկելի, կադմիումի, կոբալտի, ցինկի, կապարի և պղնձի նկատմամբ: Հարկ է նշել, որ օրացուցային պլանով նախատեսվում էր իրականացնել ցինկի և կադմիումի նկատմամբ կայունության գեների դելեցիաներ՝ նշված մետաղների կայունության մեխանիզմների ուսումնասիրության նպատակով, սակայն հաշվի առնելով, այն հանգամանքը, որ երկու շտամերի միջև տվյալ մետաղների նկատմամբ նվազագույն արգելակող կոնցենտրացիաները նույն էին, և ֆենոտիպային ոչ զգալի տարբերությունը դիտվել էր միայն պղնձի դեպքում, հետևաբար, հիմք ընդունելով նշված, ոչ զգալի, տարբերությունը իրականացվել է քանակական ՊՇՌ-ի միջոցով մետաղակայունության, մասնավորապես պղնձի նկատմամբ կայունության մեջ ներառված *copA1*, *pcoA*, *ptrA*, *hmtA*, *oprC*, *copR*, և *cueR* գեների էքսպրեսիայի ուսումնասիրում: Կատարվել է տվյալ գեների ամպլիֆիկացման համար անհրաժեշտ առկա պրայմերների երկու շտամերի գեների նկատմամբ համատեղելիության ստուգում, և որոշ, ոչ համատեղելի պրայմերների վերստին մոդելավորում:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ վերոհիշյալ թեմայի օրացուցային պլանով նախատեսված աշխատանքները համարել ավարտված:

4. ԼՍԵՑԻՆ՝ ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի կենդանաբանության ամբիոնի նախկին ասպիրանտ Ռուզաննա Գևորգյանի և կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի առկա ասպիրանտ Սիլվարդ Թադևոսյանի ատենախոսության թեմաների վերաձևակերպման հարցը:

ԼՍԵՑԻՆ՝ ԵՊՀ Կենսաբանության ֆակուլտետի կենդանաբանության ամբիոնի նախկին ասպիրանտ Ռուզաննա Գևորգյանի թեկնածուական ատենախոսության թեմայի (Գ.00.08 «Կենդանաբանություն, մակարոնաբանություն, էկոլոգիա» մասնագիտությամբ) վերաձևակերպման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի դեկան՝ կ.գ.դ., դոցենտ Կ.Ա. Ղազարյանը, գիտական ղեկավար՝ կ.գ.թ. Ս.Ա. Աղայանը, նախկին ասպիրանտ Ռուզաննա

Գևորգյանը: Վերջինս նշեց, որ ատենախոսության թեման հաստատվել է «*Toxoplasma gondii*-ի բազմազանությունը, տարածվածությունը և մակաբույծ-տեր փոխհարաբերությունները Հայաստանի որոշ մարզերի անասնաբուժական, տնային և վայրի կենդանիների շրջանում» վերնագրով: Սակայն աշխատանքի իրականացման ընթացքում հետազոտական նյութի հիմնական մասը հավաքագրվել է հենց գյուղատնտեսական կենդանիներից: Նմուշների ընդհանուր քանակը գերազանցել է 3500-ը, ինչը հնարավորություն է տվել իրականացնել լիարժեք և վիճակագրորեն հիմնավորված վերլուծություն տվյալ կենդանախմբի շրջանակներում: Այս հանգամանքով պայմանավորված՝ առաջացել է հետազոտության շրջանակները նեղացնելու և աշխատանքը բացառապես գյուղատնտեսական կենդանիների վրա կենտրոնացնելու անհրաժեշտություն, ինչը հնարավորություն է տվել առավել մանրամասն և որակյալ վերլուծել ստացված արդյունքները և բարձրացնել հետազոտության գիտական արժեքը: Այդ իսկ պատճառով անհրաժեշտություն է առաջացել ատենախոսության թեման վերաձևակերպել «*Toxoplasma gondii*-ի տարածվածությունը և գենետիկական բազմազանությունը Հայաստանի որոշ մարզերի գյուղատնտեսական կենդանիների շրջանում», ինչը համապատասխանում է կատարված աշխատանքի բովանդակությանը:

ԼՄԵՑԻՆ՝ ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի առկա ուսուցմամբ ասպիրանտ, Մանրէաբանության, կենսա-էներգետիկայի և կենսատեխնոլոգիայի լաբորատորիայի կրտսեր գիտաշխատող Սիլվարդ Կարենի Թադևոսյանի թեկնածուական ատենախոսության թեմայի (Գ.00.04 «Կենսաքիմիա» մասնագիտությամբ) վերաձևակերպման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի դեկան կ.գ.դ., դոցենտ Կ.Ա. Ղազարյանը, գիտական ղեկավար՝ կ.գ.դ., առաջատար գիտաշխատող, դոցենտ Ն.Ժ. Սահակյանը: Ղեկավարի կողմից նշվեց, որ Սիլվարդ Թադևոսյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատվել է «Հայաստանի տարածքին բնորոշ որոշ բույսերի երկրորդային նյութափոխանակության արգասիքների հակաբակտերիական ակտիվության մեխանիզմները» վերնագրով: Սակայն առաջացել է անհրաժեշտություն կատարել թեմայի փոփոխություն, հետազոտական աշխատանքի ընթացում ստացված արդյունքների հստակեցմամբ և թեմատիկ ուղղվածության նեղացմամբ: Եթե նախնական վերնագիրը ներառում էր Հայաստանի տարածքին բնորոշ տարբեր բույսերի երկրորդային մետաբոլիտների հակաբակտերիական ակտիվության մեխանիզմների լայն շրջանակ, ապա կատարված հետազոտությունների արդյունքում հիմնական ուշադրությունը կենտրոնացել է մենթոլի՝ որպես կենսաբանորեն ակտիվ միացության ազդեցության ուսումնասիրության վրա: Հետազոտության ընթացքում առանձնահատուկ գիտական և կիրառական հետաքրքրություն է ներկայացրել մենթոլի ազդեցությունը *Escherichia coli* հակաբիոտիկակայուն շտամերի վրա, մասնավորապես՝ դրա հակաբակտերիական ակտիվության և հնարավոր ազդեցության մեխանիզմների բացահայտումը: Ստացված տվյալները հնարավորություն են տվել առավել խորությամբ ուսումնասիրելու մենթոլի ազդեցությունը բակտերիալ բջջաթաղանթի հատկությունների, օքսիդային սթրեսի և հակաբիոտիկների նկատմամբ

զգայունության փոփոխությունների վրա: Ուստի, ատենախոսության վերնագրի փոփոխությունը նպատակ ունի առավել ճշգրիտ արտացոլել կատարված հետազոտությունների բովանդակությունը, գիտական նորույթը և աշխատանքի հիմնական ուղղվածությունը՝ համապատասխանեցնելով այն ստացված փորձարարական արդյունքներին և ատենախոսության փաստացի թեմատիկ ընդգրկմանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

- վերաձևակերպել Ռուզաննա Գևորգյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ «*Toxoplasma gondii*-ի տարածվածությունը և զենետիկական բազմազանությունը Հայաստանի որոշ մարզերի գյուղատնտեսական կենդանիների շրջանում», Գ.00.08 «Կենդանաբանություն. Մակաբուժաբանություն. Էկոլոգիա» մասնագիտությամբ (բնագավառ՝ կենսաբանական գիտություններ): Նախկին թեմա՝ «*Toxoplasma gondii*-ի բազմազանությունը, տարածվածությունը և մակաբույծ-տեր փոխհարաբերությունները Հայաստանի որոշ մարզերի անասնաբուժական, տնային և վայրի կենդանիների շրջանում»
- վերաձևակերպել Սիլվարդ Թադևոսյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ «Մենթոլի հակաբակտերիական ակտիվության մեխանիզմները *Escherichia coli* հակաբիոտիկակայուն շտամներում», Գ.00.04 Կենսաքիմիա մասնագիտությամբ (բնագավառ՝ կենսաբանական գիտություններ): Նախկին թեմա՝ «Հայաստանի տարածքին բնորոշ որոշ բույսերի երկրորդային նյութափոխանակության արգասիքների հակաբակտերիական ակտիվության մեխանիզմները»:

5. ԼՍԵՑԻՆ՝ ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի բակալավրիատի և մագիստրոսական կրթական ծրագրերի ղեկավարների հաշվետվության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի ղեկան՝ Կ.Գ.Դ., դոցենտ Կ.Ա. Ղազարյանը, կենսաբանության ֆակուլտետի բակալավրիատի և մագիստրոսական կրթական ծրագրերի ղեկավարները: Գիտական խորհրդի անդամներին ուսումնական տարվա ձեռքբերումներն ու ամփոփիչ հաշվետվությունները ներկայացրեցին բակալավրիատի «Կենսաբանություն» և «Կենսաքիմիա և կենսատեխնոլոգիա» կրթական ծրագրերի ղեկավարները: Կատարած աշխատանքների վերաբերյալ զեկույցներով հանդես եկան նաև «Բժշկական սնկաբանություն և կիրառական բուսաբանություն», «Էկոլոգիա և կենսաոռոտությունների կառավարում», «Հիմնարար և կիրառական ֆիզիոլոգիա», «Գենոմիկա և բժշկական բջջագենետիկա», «Կիրառական մանրէաբանություն», «Ընդհանուր և բժշկական կենսաքիմիա» ու «Կենսաաֆիզիկա» մագիստրոսական կրթական ծրագրերի ղեկավարները:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի բակալավրիատի և մագիստրոսական կրթական ծրագրերի ղեկավարների աշխատանքը գնահատել բավարար:

Նիստի ավարտին քննարկվեցին կազմակերպչական բնույթի հարցեր, որոնց կարգավորումն ու իրականացումը միտված են կրթական գործընթացի արդյունավետության բարձրացմանը, ուսուցման որակի բարելավմանը և կրթական միջավայրի շարունակական կատարելագործմանը

Գիտական խորհրդի նախագահ, կ.գ.դ., դոցենտ՝

Գ.Ա. Ղազարյան

Գիտական խորհրդի քարտուղար, կ.գ.թ., դոցենտ՝

Ի.Վ. Շահազիզյան

